ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/02, 11.01.2019թ.

Բողոք բերող անձ՝ «THESAY PHARMA DRUG STORE» L.L.C Dubai, UAE

Պատվիրատու ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա՝ Պատվաստանյութերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը չկայացած հայտարարել պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:
2. Համապատասխանեցնել ձեռքբերվող պատվաստանյութերի տեխնիկական բնութագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, հայտարարելով նոր գնման ընթացակարգ:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող «THESAY PHARMA DRUG STORE» L.L.C Dubai, UAE
Հասցե՝ ՄԱԷ Դուբայ, փոստային արկղ 117929, Բուրջինպոն թաղամաս 1114
Էլ. փոստ՝ thesaypharma@gmail.com
093 21 13.33

Պատվիրատու՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան Գարեգին Նժդեհի 3-րդ շենք

Գնման գործընթացի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ գյուղատնտեսության նախարարության
կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերում
ՀՀ ԳՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/47

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ ԷԱՃԱՊՁԲ 18/47 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա է հետևյալ նշումը. «(Անհրաժեշտ է դաբաղի վիրուսների շտամների առկայությունը հաստատող փաստաթղթեր՝ տեղեկանք դաբաղի վիրուսի A տիպի G-VII գենետիկական գծի արտադրական A N2269/2015 շտամի առկայության վերաբերյալ, շտամի ավանդադրման մասին տեղեկանք և շտամի անձնագիրը)։» /այսուհետ՝ պայման/:

Տեխնիկական բնութագրում նշված N 2269/2015 շտամը հանդիսանում է կոնկրետ արտադրողի կոնկրետ արտադրանք և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Վերը նշված պատվաստանյութը 2016 թվականից առ այսօր /բացառությամբ 2016 թվականի 2-րդ եռամսյակի/ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը մատակարարում է ՌԴ «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» Դաշնային պետական բյուջետային հաստատությունը: 2016 թվականի 2-րդ եռամսյակում մատակարարումն իրականացրել է ՌԴ «ՇՉՈԼԿՈՎՍԿԻ ԲԻՈԿՈՄԲԻՆԱՏ» ԳՊՈՒՀ-ն:

Սակայն 2017 թվականից վերը նշված պատվաստանյութի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթների հրավերների տեխնիկական բնութագրում վերը նշված պայմանը ներառելուց հետո առ այսօր պատվաստանյութի մատակարարը հանդիսանում միայն ՌԴ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ
ՄՏ3 N 598-19
«11» 01 2019

«Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» Դաշնային պետական բյուջետային հաստատությունը:

Քողարկի իրավական հիմքերը.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի.

Գնման առարկայի բնութագրերը.

1) պետք է, մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի

Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Մեր կարծիքով տեխնիկական բնութագրում նշված պայմանը հակասում է վերը նշված իրավական իրավական պահանջներին:

Խնդրում եմ

1. Դարտավորեցնել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը չկայացած հայտարարել պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԳՆ ԷԱՃԱՊՁԲ 18/47 ծածկագրով գնման ընթացակարգը:

2. Համապատասխանեցնել ձեռքբերվող պատվաստանյութերի տեխնիկական բնութագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին, հայտարարելով նոր գնման ընթացակարգ:

Կից ներկայացվում է 30000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորագիրը:

Տնօրեն Ն. Տոլանտակոբ

P.O. Box 117829
DUBAI - U.A.E.
THE SAY PHARMA DRUG STORE L.L.C.